

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆԻ ԽՈՐՀԵՐԻ ԽՈՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀՅՈՒՋԵՑՈՒԹՅՈՒՆ

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՆԱՐ ԱՌԱՐ ՅԵՐԿՐՈՒԹԻՒ, ՄԱՍԱՅ. Բ.

494

# ԳՐԱԳԵՏԸ

ԱՅԲԲԵՆԱՐԱՆ ՄԵՇԱՀԱՍԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԿԱԶՄԵՑԻՆ

ՔԱՂԱՔԻ ՍՊԱՐԻ ՄԻ ԽՈՒՄԲ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ  
ՅԵՐԿՐՈՒ տիպ.



91.99-8

2 - 87

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱԳՈՒԹՅՈՒՆ - № 87.

ՕԵՐԵՎԱՆ - 1924.

# ԴԱՍԱՏՈՒՆԵՐԻՆ

Դասագիրքը կազմված և Մոսկվայի Համառուսական Մեթոդիստների Կոնֆերենցիայի կողմից (1922 թ. սեպտ. 7—12), ընդունված ամբողջական խոսքերի վելուծական-համադրական մեթոդով: (Տես руководителем занятий №, 3 изд. ВКЧ):

Դասն սկսվում և բանավոր զրույցով, վորի նպատակն է բացատրել, վերլուծել և զարգացնել տվյալ դասի նյութը կազմունքի իմաստը:

Այսուհետեւ լողունզը պիտի գրել գրատախտակի վրա խոշոր և պարզ տպագիր տառերով, հստակ ու բարձրաձայն կարգավոր արտասանել տալ, վորագիրի սովորողը բառի հնչյունական կողմը զուգորդի զրա գծադրական պատկերի հետ Յերբ սովորողները կարողանում են բառի գծագրական պատկերը ճանաչել և գտնել պահանջված բառերը լողունզի կամ այդ դասում յեղած մյուս խոռքերի մեջ, պիտի առաջնային մենք արել ենք զրբում)

491542-87

Գրագիր

1001 տառեր  
8642 լունը

ծ հըն-  
տանքի

վորոնց

ամ բա-

ռով,

սովորո-

ց դասի

լուսը

2191-542-

9 - 93

1203

8647

624

1047

մեջ տվյալ հն  
ուագիրջին լին  
Առաջին  
դին միանդամի  
ընթացքում են  
անձանոթ հնչյուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀԻՎԱՅԻՆ ՀԵՆՐԵՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՆ ԲՈԼՈՎ ՅԵՐԿՐՈՒԹՅՈՒՆ, ՄԻԱՅՅԻՔ.

428

54. ԳՐ

Գ Ր Ա Գ Ե Տ

31.99-8

7-87

ԱՅԲԲԵՆԱՐԱՆ ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Քանի դեռ մեզ մոտ կա անգրագիտուրյուն, բայց ամառական լուսավորության մասին խոսք չի կարող լինել: Անգրագիտ բայց ամառական լուսավորությունից դուք եք:

1. Ե Ն Ի Ն

Կ Ա Զ Մ Ե Ց Ի Ն

ՔԱՂԱԿՈՒՍՎԱՐԻ ՄԻ ԽՈՒՄԲ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ

Յերկրող տիպ.




494  
1375

07-2001

21.03.2013

8755



ուսումը ուժ և  
ուժ և ուսումը

ու-սու-մը ուժ և      ու  
ուս ում ուժ  
սուս սեմ ես և      ե  
ես ուս ե  
ես սեմ ե

ուսում ունես—ուժ ունես  
ունես ուսում—ունես ուժ

ու-նես ու-սում  
ուսում ունեմ      մ  
ու ում  
ե եթ ու սուս  
ու ուժ      ս  
ուսում—ես ե ուժը  
ուսում ունեմ—ուժ ունեմ



3715-91

ուշ լինի—նուշ լինի  
 նուշ լինի—ուշ լինի  
 լինի նուշ—լինի ուշ  
 լինի ուշ—լինի նուշ  
 լի նի լի ուշ լի ու լի  
 ու ուշ նուշ շուն  
 լի իւ ին մի միս  
 միշ շիւ շուշի մուշ  
 միս լուսին լենին  
 ուսում ունես—ուժ ել ունես  
 ուշ ուսումն ել նուշ ե  
 ես մի շուն ե. սուլում եմ  
 լսում ե ու սուս ե

---

ով կարդա—նա մարդ ա  
 ով մարդ ա—նա կարդա  
 կարդա դա դու դես դեն  
 կար կա կամ կալ կում մուկ  
 նա նուշ են շեն ին կին  
 կարդա—ուժ կունենաս  
 կինն ուսում ունի—կինն ուժ ունի  
 լի ու կիրակի կարդա ու կարդա  
 ուսում—դա մեր ուժն ե  
 եսոր դաս ունեմ

---

շինականը շինարար և  
 շինարար և շինականը  
 շինականը ու-սու-մը      թ  
 շինական ակ կա ասա      թ  
 շինարար ա-րա կարդա      թ  
 շինական ընկեր, կարդա, շինիր:  
 շինիր—շեն կը լինես:  
 շիրակը շինարար ե:  
 կարմիր գրոշակը շինականի գրոշակն ե:  
 ընկեր, մի ասա ուսումն ուշ ե:  
 ուշ ե—ելի անուշ ե:  
 շինիր շինական,  
 շինիր շարունակ.  
 լի ու կիրակի  
 շինիր ու շարիր,  
 կարդա ու վարիր:

---

Ով շինի—շեն կը լինի  
 շեն կը լինի—ով շինի  
 ով վոր      թ  
 վոր ով      թ

Ով կարդա ու շինի, շեն ու ուժով կը լինի:  
 Միասին շինիր, վոր ավելի ուժով լինես:  
 Մենակ մարդն անուժ ե:  
 Լուսավորվիր, վոր լուսավորես:  
 Վորդիդ ել վոր ուսում ունենա—ուժով կը լինի:

Ուսումն ուժ ե:

Դւսումն ուժ ե:

Ուսում ունես—ուժ ունես

Դւսումունես-ուժունես

Ուշ լինի—նուշ լինի:

Դւշ լինի—նուշ լինի:

Ով կարդա, նա մարդա ա:

Դվ կարդա, նա մարդա:

Շինականը շինարար ե:

Շինականը շինարար ե:

Ով շինի—շեն կը լինի:

Դվ շինի—շեն կը լինի:

—

**Ով աշխատի, նա ոտի**

Դվ աշխատի, նա ոտի

աշխատի ոտի                    Տ ա ՛ լլ ց  
աշխատի խա-վար վախ Խ ի ի ի

Աշխատիր, վոր ուտես: Դաշտում աշխատիր,  
տանը սովորիր: Մի ժամանակ աշխատավորը շատ  
աշխատում, դատարկ եր նստում: Նա անուսում  
եր ու անուժ:

Ու ու	Ե ե	
Դւ ու	Ե ե	
Մ մ	Ս ս	Փ փ
Մ՛Վ	Ա ա	Ժ ժ
Լ լ	Ի ի	Շ շ
Ձ ձ	Ի ի	Շ՛Շ
Դ դ	Կ կ	Ն ն
Դ դ	Կ կ	Ն ն
Ա ա	Ր ր	Ը ը
Ի ի	Ռ ր	Ը՛Ը
Ո ո	Վ վ	
Ո ո	ՎՎ	

Ուժն ու ուսումը տերտերինը, դրամատերինն  
ու իշխանինն եր: Մեր որով ով աշխատի,  
նա մենակ կուտի: Աշխատավորն իր վաստակի  
տերն ե: Աշխատավորն աշխատում, աշխատավորն  
ել ուտում ե:

—  
I      II      III      IV      V      VI      VII      VIII      IX      X  
1      2      3      4      5      6      7      8      9      10

**Մեկը բոլորի համար,**  
**Բոլորը մեկի համար**  
**Մեկը բոլորի համար, բոլորը մեկի համար**  
**բո-լո-րի բ բ թ թ**  
**համար չ չ հ հ**

Բոլորը մեկին, մեկը բոլորին:  
Հաշվիր մեկ-մեկ բոլորին:  
Վուշը մշակիր, մանիր, շորեր կարիր:  
Բամբակ մշակիր, շեն կլինիս:

Շինականն աշխատում ե բանվորի հետ ու  
նրա համար: Բանվորն ել աշխատում ե շինա-  
կանի հետ ու նրա համար: Շինականը բանվորին  
տալիս ե սնունդ: Բանվորը շինականին տալիս ե  
հագուստ:

Գեղ կանգնի, գերան կը կոտրի  
 Ջեղ կանգնի, գերան կը կոդրի  
 Գերան գեր գ գ գ  
 զ դ զ դ

Կանգնիր ամուր, շինական,  
 Գեղի տերն ու տիրական.  
 Երեկ աղեն եր տերը,  
 Աղեն ու իր տերտերը.  
 Տերն ես հիմա ամենի,  
 Գընա հանգիստ աշխատի:

Կանգնիր առուր, շինական,  
 Ջեղի ցեր ու ցիրական,  
 Երեկ աղեն եր ցերը,  
 Աղեն ու իր ցերցերը.  
 Մերն ես հիմա ամենի,  
 Գընա հանգիստ աշխատի:

Մեր գեղում հիմա գըագետ շատ կա: Բու-  
 լորն աշխատում են գըել, կարդալ սովորել:  
 Հինգ տարի ճետո բոլորն ել գըագետ կը լինեն:  
 Եղ որը բախտավոր որ կը լինի մեր գեղի համար:

Կարմիր բանակը մեր յերկրի պաշտպանն է:  
 Կարմիր բանակը մեր յերկրի պաշտպանն է:  
 Յերկ-ը Յ Յ Յ  
 Պաշտ-պան Պ Ա Պ Ա

Ո՞վ ե պաշտպանում մեր յերկիրը. — Կարմիր  
 բանակը: Ո՞ւմ ե պաշտպանում կարմիր բանա-  
 կը. — աշխատավորին: Ո՞վ ե կարմիր բանակա-  
 յինը. — նույն աշխատավորը. այսոր նա սուր  
 ունի, վաղը մանգաղ և (յեվ) արոր կունենա:

Մայիս	Ի՞սկիս
Գարնան ամիս	Գարնան ամիս
Սիրուն մայիս,	Աիրուն մայիս,
Նախշ ու նկար,	Նախշ ու նկար,
Բարով յեկար:	Բարով յեկար:
Յեկար, բերիր	Յեկար, բերիր
Վարդը կարմիր,	Վարդը կարմիր,
Առւսան, սըմբուլ,	Առւսան, սըմբուլ,
Յերգ ու բըլբուլ:	Յերգ ու բըլբուլ:

Հողը գյուղացուն, գործարանը բանվորին  
 հողը գյուղացուն, գործարանը բանվորին  
 Գոր-ծա-րան գործ Գ գ Շ գ  
 Գյու-ղա-ցի գյուղից Յ ց Յ ց

Ցարերի ժամանակ բանվորն աշխատում էր  
 որական 10-12 ժամ և ստանում միայն կոպեկ-  
 ներ։ Նա ապրում էր խավար ու խոնավ նկուղ-  
 ներում։ Ծույլ շահագործողներն ապրում եյին  
 պալատներում՝ հանգիստ, ուրախ։ Գյուղացին  
 սակավահող էր և կերակրում էր աղաների մի  
 մեծ բանակ։ Շահագործման ծանր լուծն այլևս  
 անտանելի յեր աշխատավորների համար։ 1917-ի  
 Հոկտեմբերին միացած բանվորն ու գյուղացին  
 տապալեցին ցարի լուծը և հաստատեցին իրենց  
 Խորհուրդները։ Խորհուրդներին մասնակցում են՝  
 միայն բանվորն ու գյուղացին և նրանց պաշտ-  
 պան կարմիր մարտիկը։

---

## Աշուն

Ով ցանել ե՞  
 հնձում ե,  
 ով տնկել ե՞  
 քաղում ե։

Զ Ճ

Վախ չունի՞  
 ով աշխատել ե, Զ Ճ  
 հոգս չունի՞  
 ով ժողովել ե։

Կտրիչն աչք ունի  
 կանաչ կարմրին,  
 իսկ ծույլն աչք ունի  
 ցըտին ու սովին։

## Միշոն

Ով ցանել ե՝  
 հնձում ե,  
 ով տնկել ե՝  
 քաղում ե։

Զ Ճ

Վախ չունի՝  
 ով աշխատել ե, Զ Ճ  
 հոգս չունի՝  
 ով ժողովել ե։

Կտրիչն աչք ունի  
 կանաչ կարմրին,  
 իսկ ծույլն աչք ունի  
 ցըտին ու սովին։

Կարմիր ռանչպար, ձեռք տուր բանվորին  
կարմիր ռանչպար, չեռք դուր բանվորին

Դու ռանչպար ես, իսկ յես՝ բանվոր,  
մենք յեղբայր ենք, ընկեր հին,  
մենք չենք տեսել ուրախ մի որ  
ու լացել ենք դառնագին:

Կոփման ահեղ կոեց ի մի  
մեր բախտն ու կամքն անսասան.  
Ճեռք ճեռքի տանք, գնանք հիմի  
դեպի կարմիր ապագան:

Ռ ռ                  Փ ք

Դու ռանչպար ես, իսկ յես՝ բանվոր,  
չեռք յեղբայր ենք, ընկեր հին,  
չեռք չեռք դեսել ուրախ մի որ  
ու լացել ենք դառնագին:

Կորիմն ահեղ կոեց ի մի  
մեր բախտն ու կամքն անսասան.  
Ճեռք ճեռքի դանք, գնանք հիմի  
դեպի կարմիր ապագան:

Ռ ռ                  Փ ք

Վոչ մի կտոր զը ցանած հող զը բողոքել  
Չը ցանած հող վոչ մի կրոր զը բողոքել

Չը-թող-նել, թող թ թ թ  
Անցան, անվար հող չթողնել մի կտոր

հող չունես — չես վարի  
չես վարի — չես ցանի  
չես ցանի — չես կալսի  
չես կասլի — դատարկ կը նստես  
Հիմա հող ունես — պիտի վարես

թե վարես,  
թե ցանես,  
թե կալսես  
դու ել կը կշտանաս, մեր յերկիրն ել  
կը կշտացնես:

Կինը հիմա ազատ քաղաքացի յե  
լինը հիմա ազատ քաղաքացի յե  
Ա-զատ զատ Զ զ Զ զ

Մի ժամանակ կինն ազատ քաղաքացի չեր:  
Նա զուրկ եր իրավունքներից: Հիմա նա ազատ  
քաղաքացի յե, հավասար տղամարդուն: Աշխա-  
տավոր կինը հիմա իր աշխատավոր ամուսնու  
կամ յեղբոր հետ վերաշինում ե մեր յերկիրը:

Գյուղումն ել կինը ձգտում ե գրագետ լինել,  
լուսավորել իր միտքը, զարգանալ։ Աշխատավոր  
կինը միացել ե պրոլետարների հզոր բանակին։

## Անգրագետ

Իր վորդուց մայրը  
նամակ ստացավ,  
կարոտած սիրտը  
վեր ու վար յեղավ։

Նայում ե նամակին՝  
սիրուն նշաններ,  
բայց այդ գրերի  
միտքը չըգիտեր։

Յեվ նրան կանչեց.  
«Մարկոսի տղա,  
մոտս յեկ, ապրես,  
նամակը կարդա»։

Փառք ընկածներին։  
Փառք ընկածներին։

Փ Փ Փ Փ

Մեր հեղափոխական ուղին փշոտ ե յեղել։  
Հեշտ չեր փշրել դարերով պատրաստված հա-  
կառակորդ սև ուժը։ Նա ուներ զենք ու զորք,

փող ու մեքենա։ Աշխատանքի ազատագրման  
մեծ կռվում մենք թանգագին զոհեր ենք ունե-  
ցել։ Նրանց արյան գնով ենք մենք փրկվել։  
Նրանք մեռան, բայց նրանց գործն անմահ եր։  
Փառք մեծ գաղափարի զոհերին։

Հառաց, դեպի յետ ճանապարհ չկա-  
հառաց, դեպի յետ ճանապարհ չկա-

Ճանապարհ Ճ Ճ Ճ

Առաջ, ջահ Ջ ջ

Ճանապարհը դեպի յետ—տանում ե դեպի  
շահագործում, դեպի խավար ու ստրկական  
կյանք։ Մենք ջախջախել ենք ցարերի, կալվա-  
ծատերերի և կապիտալիստների ճնշումը։ Մեր  
բախտն ու վիճակը մեր ձեռն ե հիմա։ Մենք  
քանդել ենք բոլոր կամուրջները մեր յետեից։  
Մենք գնում ենք հառաջ, դեպի յետ ճանա-  
պարհ չկա-

Մնացել ե բերդը մեզ,  
հաղթանակի յերթը մեզ.  
անց են կացել ով կային,  
հիմի կըգա հերթը մեզ։

**Բոլոր ֆրոնտներում մերն եւ հաղթանակը:**

**Բոլոր ֆրոնտներում մերն եւ հաղթանակը**

**Հաղթանակ, հաղթ թթ թթ թթ**

**Ֆրոնտներում, ֆրոնտ Ֆ Փ Փ Փ**

**Ա. Ռ Ա. Զ Ի Ն ֆրոնտն արտաքին և ներքին ռազմական ֆրոնտն եր:**

**ՅԵՐԿՐՈՐԴ ֆրոնտը շինարարական ֆրոնտն եր:  
ՄԵՆՔ վերականգնեցինք գործարանը, մշակեցինք հողն ու հանքը,  
հաղթահարեցինք սովը, ծածկեցինք  
մեր մերկությունը:**

**ՅԵՐՐՈՐԴ ֆրոնտը լուսավորության ֆրոնտն  
ե: ՄԵՆՔ տգետ եցինք, խավար,  
անգրագետ: ՄԵՆՔ ճիգ ու ջանք  
ենք թափում սովորելու, լուսավոր-  
վելու:**

**Լուսավորության ֆրոնտումն ել մենք կը հաղթենք:**

Ա ա Բ Բ Գ Գ Դ Դ Ե Ե Զ Զ Ը Ը  
Ահ ա Բի բ Գի գ Դի դ Եի ե Զի զ Ըի ը

Թ Թ Ժ Ժ Ի Ի Լ Լ Խ Խ Ծ Ծ Կ Կ  
Թթ թ Ժժ ի ի Լլ լ Խխ խ ԾԾ ծ ծ ԿԿ կ կ

Հ Հ Զ Զ Ղ Ղ Ճ Ճ Մ Մ Յ Յ Ն Ն  
Հհ հ Զզ Ղղ Ճճ Մմ Յմ յ Նն ն ն


Շ Շ Ո Ո Չ Չ Ջ Ջ Ռ Ռ Ո Ո Ս Ս  
ՇՇ շ Ոո Չչ Ջջ ՌՌ Ոո Սս ս ս

Վ Վ Տ Տ Շ Շ Ռ Ռ Ց Ց Փ Փ Ք Ք Ֆ Ֆ  
ՎՎ վ Տտ ՇՇ ՌՌ ՑՑ ՓՓ ՔՔ ՖՖ ֆ ֆ

1	2	3	4	5	6	7	8	9	10
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X

ՀԱՅ - 91

9.09.98 2




## Յերկրագործ

Արև չծագած մաճն ե քո ձեռին.  
յոթ զույգ յեղ, գոմեշ լծած գութանին՝  
ծրում ես, պատում դու կոշտ ու խոպան,  
լեռներ ու դաշտեր, հանդ ու անդաստան:  
Յանում ես ցորեն, կորեկ ու գարի,  
հաճար ու վարսակ, բամբակ ու բրինձ,  
Ծլում են ծաղկում ճակտիդ բրտինքով  
քո վարած դաշտեր, վոր լի յեր փշով:  
Անցնում ե գարուն. վոսկեզոծ հասկեր  
լըցնում, ծածկում են քո սիրուն արտեր:  
Քամին փչում ե, արտը տատանում.—  
կարծես նոր հարս ե, հերանց ե գնում:  
Հասել ե ամառ. մանգաղը ձեռիդ  
հնձում ես, հնձում, խուրձեր կապոտում:  
Խուրձերը բարդ-բարդ կլում ես, բերում  
ու առատությամբ կալումդ դիզում:  
Հաշան ես անում, կալսում ու գատում,  
մաքուր ցորենը տանդ ամբարում,  
իսկ չոր դարմանը ձմեռվա պաշար  
մալագդ լցնում անամնց համար:  
Յեվ յերբ փչում ե ցրտաշունչ ձմեռ,  
խրճիթում նստած քո խովն ես սրում,  
արոր ու գութան սարքում պատրաստում,  
ու գարնան գալուն նորից սպասում:  
Ո՞հ, յերկրագնրծ, յերկրագնրծ,  
վորքան սիրուն ե քո գործ:

## Բարի գործ

Յոթանասուն տարեկան ծերունին պարտեզի մեջ  
տանձի ու խնձորի ծառ եր տնկում. Շատ աշխատելուց  
խեղճը բրանել, ջուր եր դառել:



## ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

### Հատիկ

Հույսը բացվում ե, շուտ արտը գնամ,  
պատռեմ սուր խոփով յես կուրծքը հողի,  
իմ սիրուն հատիկ, քեզ նրան պահ տամ  
մինչև որերը ամռան արեի:

Թաղեմ քեզ, հատիկ, և դարդս քեզ հետ:

Ծիր, կանաչիր, վոսկե սավանով  
ծածկիր իմ արտը վողջ ալեծածան:  
Նոր այն ժամանակ անուշ շըշյունով  
տուր ջարդված սրտիս մի քուն հանգստյան.

Մի յերիտասարդ տեսակ ծերունուն և ասաց. «Ծերուկ, ինչու յես ի զուր նեղություն քաշում, ինչու յես տանջվում, չարչարվում. մինչև այդ ծառերը արմատ բռնեն, մեծանան, պտուղ տան՝ դու կը մեռնես»:

— Իհարկե կը մեռնեմ,—պատասխանեց ծերունին,  
— բայց ինչպես յերեւմ ե՝ դու կարծում ես, թե մարդ  
միայն իր համար պիտի աշխատի. Վհչ, վորդիս, ուրիշ-  
ների համար ել պիտի մտածենք. Ահա, տնկում եմ այս  
ծառերը. Թող սրանք մեծանան, պտուղ տան։ Թող յես  
մեռած լինեմ, ինչ անենք. — ուրիշները կուտեն և կը  
հիշեն իմ բարի գործը։

## Գյուղ ու քաղաք—ուժը հավաք

Գյուղից քաղաք են տանում—հաց, միս, կաթ, յուղ  
և ուրիշ սննդամթերքներ. Քաղաքը պետք ունի գյուղի  
զանազան ապրանքների՝ վուշի, կանեփի—քաթան պատ-  
րաստելու, բազուկի—շաքար շինելու, և այլն։

Քաղաքից գյուղ են փոխադրում—շաքար, աղ, ա-  
սեղներ, թել, յերկաթ, մեխ և այլ ապրանքներ։

Գյուղի համար ել շատ բան ե պետք—գութաններ,  
փողխեր, գերանդիներ, մանգազներ և զանազան մեքե-  
նաներ, վորոնցով շուտ ե գործ տեսնվում։

Քաղաք տեղի գրագիտությունն ավելի յե։ Այնտեղ  
բարձրագույն դպրոցներ ել կան, վորտեղից գուրս են  
գալիս գյուղատնտեսներ, յերկրաչափներ, ճարտարա-  
գետներ և ուրիշ շատ տեսակի մասնագետներ։

Քաղաքումն ե, վոր տպվում են գրքեր, որացույց-  
ներ, լրագիրներ և ամսագրներ, Դրանցից ե, վոր իմա-  
նում ենք, թե ինչպես պետք ե ուղղենք մեր կենցաղն,  
ինչպես գիտությունը գործ դնենք մեր ոգտին։ Դրանք  
հարկավոր են քաղաքիս ել, գյուղին ել։

Քաղաքը չի կարող ապրել առանց հացի և ուրիշ  
անդամթերքների. գյուղն ևս առանց քաղաքի անձա-

լակ ե. մի յերկու տարի գլուխ կը պահի, բայց հետո  
փայտով պետք ե վարի, ցանի։  
Գյուղ ու քաղաք—ուժը հավաք։

## Սոր առավոտ

Ի՞նչ եմ անում մենակ կյանքը,  
վոր խեղճ մնամ ու զրկված.  
Ճեռքս կտամ իմ ընկերոջ  
ու միշտ կանեմ սիրտս բաց։

Դե, ունչպարներ, վոտքի յելնենք,  
մեզ ե սպասում խամ դաշտը.  
մեկի տեղը հազար յելնենք,  
մեզ ե կանչում նոր կյանքը։

## Տերտերի գործադուլլ

Տեր Բարսեղը դժգոհ եր.  
Իրեն տված հասույթը  
շատ քիչ եր։  
Հին որերից սովոր եր  
լցնել իր ամբարները.  
Ել քարոզել,  
ել բողոքել,—  
վոշինչ չոգնեց...  
Բայց լսել եր,  
թե բանվորն ել  
մի բան վոր ուզեր  
ու չարանար,  
գործադուլ  
կը հայտարարեր.  
Ուզեց ինքն ել  
միշտ այդպես

հայտարարել  
գործադուլ։  
Քրիստոսի հարությունից  
մի որ առաջ  
յեկեղեցուդուռը կողպեց,  
տիրացուին հետն առած  
տանը նստեց,  
հայտարարեց  
գործադուլ.՝  
Մինչև տան գլուխ  
իրեն չեն տա  
մի-մի վոշխար,  
տիրացուին՝  
մի մի հատ ուլ,՝  
աղոթք չկա,  
յեկեղեցուդուռը չի բանա։

Տեր Բարսեղը շատ հույս ուներ. —

զատիկ որ եր.

զատիկ որով յեկեղեցու դուռը փակել, —

գիտեք թե եղ ինչ ասել եր... —

ինչ պիտի անեն,

ուզեն չուզեն պիտի բերեն...

ել կակղեն...

Զատիկ որով

ժողովուրդը հավաքվել,

թունդ վիճում ե,

մտածում ե՝

ինչ անել...

ել թեր ու դեմ...

վըճում են եղան թողնել,

մինչ տերտերը խելքի գա,

ինքը բանա...

Տեր Բարսեղը տանը նստել  
սպասում ե՝

թե զյուղացին հավաքում ե

վոչխար և ուլ

դուռը բերի...

սպասում ե մինչ իրիկուն:

...Վայ ե տալիս իրեն զլխուն. —

Փսասկել եր ելի ինքը.

Ճեռքից եղան

բաց եր թողել

առուտուրի հաջող որը,

պատարագն ու տնօրիները,

«զյալուրները»:

Գործադուլը

տունը բանդեց.

Գործադուլը

վիժեց:

Կուսունողի զատիկը

Զատիկ բերեց կանաչ գարուն

մեր զաշտերին ու ձորերին,

աշխատանքը հնչեց յեռուն

մեր զյուղացու յերակներում:

Զատիկն եկավ կանաչներով,

հաղթ ու կարմիր ջահելներով.

Կոմսոմոլը յեկավ գեղով

կարմիր խոսքով, կարմիր յերգով:

Տերտերները ահ ու դողով,

ֆարաջաները ուսերով

տափ են մտնում խորաններում՝

«տեր վողորմյան» բերաններում:

Կոմսոմոլը գեղի միջով

անցնում հպարտ ու խիտ շարքով՝

աշխատանքի հզոր յերգով

ամբողջ գեղը թնդացնելով:

Վողջունում ե կարմիր գարնան,

վոր դուրս քշեց ցուրտ ձմեռվան.

Վողջունում ե աշխատանքը,

վոր ստեղծում ե ամեն բան:

Ու յերգում ե Կոմսոմոլ. —

«Աշխատանքի տոնն ե եսոր.

տերտերները հեռու կանգնեն,

բավական ե գեղին խարեն»:

Ու յերգելով գեղի միջով

անցնում են մեր ջահելները.

տերտերները ահ ու դողով

պահ են մտնում խորանները:

# Չրի կաթիլի ձանապարհորդությունը

I

— Այս, ինչպես կուզեմ վերև բարձրանալ, վերև, շատ վերև, են սարի գլխին, են ամպի մոտ, արևի քով, աստղերին հասնել, ասաց մի կաթիլ:

— Յես ել եմ ուզում, յես ել,—ձայն տվին ծովից շատ կաթիլներ.—վերև բարձրանալ, վերևից նայել, թե ինչ կա այստեղ աշխարհի վրա: Ենտեղից տեսնել սարեր, ձորեր, անտառներ, դաշտեր, բաղաքներ, ծովեր: Այս, ինչ լավ կը լիներ:

II

Արեր լսեց, տաք ճառագայթներ ուղարկեց, ջրի կաթիլներին վերև կանչեց: Մեր կաթիլները բիշ-բիշ տաքացն, անտեսանելի գոլորշի դարձան, վերև բարձրացան:

Նրանք շատ, շատ բարձրացան, սարերից ել վերև, ամպերին մոտեցան:

— Եստեղ ինչ ցուրտ ե, ասաց մի կաթիլ և կուչ յեկավ. վերևում դժվար ե ապրել.

— Այս, այս, ձայն տվին ամենքը, ինչ լավ կը լիներ, առաջվա պես ներքեում լինելինք:

III

Արեր լսեց. ցուրտ քամին ուղարկեց: Գոլորշիները ցրտից կուչ ու ձիգ արին, իրար մոտեցան, կամաց-կամաց սեղմվեցին իրար և ամսանելի ամպ դարձան:

— Ի՞նչ մութ ամպեր են, ասացին մարդիկ ներքեւում:

— Ես ինչպես ցուրտ ե, ինչ պաղ քամի յե, ասացին ամպ դարձած գոլորշիները, ավելի իրար մոտեցան, նորից կաթիլներ դարձան:

IV

Բարև ձեզ, բարև, սիրելի ընկերներ, ասացին կաթիլներն իրար: Այս, հիմա լավ ե: Ի՞նչ լավ յեղավ, վորելի կաթիլ դարձանք:

— Ի՞նչ լավ անձրեւ ե գալիս,—ասացին մարդիկ յերկրի վրա:

Խումբ-խումբ կաթիլներ գոռում-գոչյունով ներքեւ են վազում, հողը պատառում, ծաղիկ ու ծառ արմատախիլ անում և առաջ գնում:

V

— Ի՞նչ սոսկալի հեղեղ ե,—ասացին մարդիկ:

— Յես շտապում եմ, շուտ ճամպա տվեք, ասում եր հեղեղը և առաջ գնում:

Այսպես նա շատ առաջ գնաց, հասավ մեծ գետին: Հեղեղն այստեղ շուտով կու գնաց ու սկսեց գետի հետ հանդարտ հոսել:

Մեր կաթիլներն այսպիսով վերջապես հասան ծովին՝ իրենց մոր գիրկը:

— Բարօվ յեկաք, իմ կաթիլներ ասաց ծովը և գլուքեց նրանց:

## Սերմնացան Աերենա

Յանել կարելի յե ձեռքով կամ մեքենայով: Ձեռքով դժվար ե արտը հավասար ցանել: Մեքենայով ցանքուն ավելի արագ ե կատարվում. մինչդեռ ձեռքով մի որում 3 դեսյատին հազիվ կարելի յե ցանել, մեքենայով մինչև 5 դեսյատին կարող ենք ցանել:

Մեքենայով ցանքսը լինում ե շարքերով և սերմ ել բիշ ե գնում՝ դեսյատինին 8 փութ. այն ինչ ձեռքով ցանելիս դեսյատինին գնում ե 12 փութ:

Մեքենայով ցանելիս սերմերն արտում հավասար խորության են ընկնում ու ծլում են միաժամանակ ու մի բարձրության: Ձեռքով ցանելիս սերմերի մի մասը խորը թաղվում կամ յերեսն ե մնում ու չի ծլում:

Սերմնացան մեքենայով ցանքսը լավ ե դուրս գալիս: Սերմը սերմին չի խեղղում, բոլոր սերմերն ել աղատ աճելու տեղ ունեն:

Շարքերը լայն յեղած դեպքում անպետք խոտերը կարելի յե քաղհանել:

Մեկի ուժը չի պատիլ սերմնացան մեքենա գնելու, բայց վոր շատվոր լինեն—ամեն մեկին թիշ ծախս կը նստի:

## Կովի կերակրելը

Գյուղացին իր կովը կերակրում է զլխափորապես խոտով, դարմանով և թիշ և տալիս աղած-մանրած կեր՝ ալյուր, թեփ, բուսպ: Խոտը շատ անգամ գետին և թափ-փում և կովը կերի մի մասը կոխկրտում է: Կովերը կապում են մութ գոմերում, խեղդված ողի մեջ:

Կովից շատ կաթ ստանալու համար պետք է ամենից առաջ վերացնել խնամքի հիշված թերությունները, պետք է գոմը տաք և լուսափոր լինի: Իսկ ամենազբլիւափորը, պետք է կեր տալ կովին նրա կենդանի քաշը համեմատ:

Մեզանում կովի միջին կենդանի քաշը 9 փութ է, իսկ տված կաթը 8 գրփանքա:

Այս տեսակ կովին որեկան պիտի տալ 18 գրփ. խոտ, վորպեսզի նա չնիհարի և կաթը չպակսեցնի: Սովորաբար կովին այդքան խոտ չեն տալիս, այլ ավելացընում են ավելի ուժեղ կեր, որինակ՝ թեփ (նայիր հաջորդ գլուխը) և կամ ավելի անուժ կեր, որինակ՝ ծըղնուր, բալումը:

Դանիայում գյուղացիները հաշվել տեսել են, վոր 1 գրփանքա թեփով կարելի յե փոխարինել 3 գրփանքա խոտ կամ 6 գրփանքա ծղնութ-բալում:

Մի կերը մյուսով փոխարինելու ժամանակ, վորպեսզի հաշիվը ճիշտ լինի, ընդունված է միշտ ել ուժեղ կերպով, որինակ՝ թեփով, ալյուրով: Կազմել կերի հաշիվը, դրա մի գրփանքան կերի մի միավոր հաշվելով: Այդպիսով 18 գրփ. խոտն անում է 6 միավոր կեր, վորովհետև մի միավոր կերը հավասար է 3 գրփ. խոտի:

Այս 6 միավոր կերը կարելի յե զանազան տեսակի կերերից ստանալ: Կերը տալիս են այսպես,

Տարիների փորձից պարզվել է, վոր կենդանի քաշը 3 փութ մսին պետք է որենը 1 միավոր կեր: Այդ մարմինն աննվազ պահպանող կերն է: Դրանից կովը չի շինում, բայց չի յել նիհարում:

Կաթ ստանալու համար կովին պետք է տալ յուրաքանչյուր 3 գրփանքա կաթի դիմաց մի միավոր կեր՝ չհաշված յուրաքանչյուր 3 փութ քաշին տված մեկական միավոր կերը:

Իմ կովը տալիս է որենը 12 գրփ. կաթ և ունի 12 փութ ել կենդանի քաշ: Հաշվենք տեսնենք՝ քանի՞ միավոր կեր պետք է տալ նրան:

Յերբ հաշվեք, կը տեսնեք, վոր իմ կովին 8 միավոր կեր և հարկավոր:

Ծանօթություն: Կովը կշռել դժվար է, ուստի քաշը վորոշում են չափելով: Զափում են ուսի ծայրից մինչև պոչը արմատը՝ գնելով կովը հորիզոնական դրության մեջ. ասենք յեղավ 16 վերշոկ: Ապա չափում են իրանի հաստությունը առաջի վոտների թիակների յետեկից. ասենք յեղավ 30 վերշոկ:  $16 \times 30 = 600$  գրփ. կամ 15 փութ—կը լինի կովի քաշը:

1. Վորոշեցեք ձեր կովի քաշն ու կաթի քանակը:
2. Հաշվեցեք՝ որպական քանի՞ միավոր կեր պիտի տաք ձեր կովին:
3. Կազմեցեք կերի միավորների աղյուսակ ձեր կովի համար ցածում բերած որինակով:

## Յանկ կերի միավորների

Ուժեղ կեր.

- |   |   |          |
|---|---|----------|
| 1 գրփ. ալյուրեղեն                                     | } | 1 միավոր |
| 1 » թեփ   |   |          |
| $\frac{3}{4}$ » բուսպ՝ կտափհատի, բամբակի և արևածագկի: |   |          |

Չոր յեվ կոշտ կեր.

- |                                     |   |          |
|-------------------------------------|---|----------|
| 3 գրփ. մարգագետնի չոր խոտ           | » | 1 միավոր |
| 4 » ճահճային                        |   |          |
| $2 - 2\frac{1}{2}$ գրփ. չոր առվույտ |   |          |
| 4—5 » գարնցան դարման                |   |          |
| 5—6 » աշնցան                        |   |          |

12	գրվ.	կանաչ խոտ	1 միավոր
8	"	առվույտ	
15	"	բազկաթեր	
13	"	կաղամբաթեր	
Հութեղ կեր			
8-10	գրվ.	բազուկ	1 միավոր
8	"	գազար	
6	"	կարտոֆիլ	
Կովիս տալիս եմ՝			
6 գրվ. 2 միավոր խոտ			
2 " 1 " առվույտ			
6 " 1 " դարման			
3 " 4 " քուսպ			

Կովս չի նիհարում և շարունակում ե միաչափ տալ իր կաթը:

## Բանջարանոցի ոգուտը

Բանջարանոցը պահանջում ե աշխատանք և գիտություն։ Բանջարանոցի համար լավ հող ե պետք, ուժեղ պարարտացում, ջուր և լավ գործիքներ։

Բանջարանոցը պիտի պատրաստել աշունքվանից։ Մի կոկիկ բանջարանոց կարելի յե սարքել 80 մարդից, յուրաքանչյուր մարդը  $\frac{1}{2}$  արշին լայնության և 10 սաժեն յերկարության։ Ամեն մարդին 1 սայլ գոմի աղբ պիտի տալ։

Գլուխ կաղամբը 1 մարդից տալիս ե 100 գլուխ 5 կոպեկ արժողությամբ յուրաքանչյուրը։

Մի մարդ տալիս ե 5 ոռուլի ոգուտ։

Մի մարդից 3 փութ սոխ ե ստացվում փութը 2 ոռուլի. ուրեմն մի մարդից 6 ոռուլի։

Մի մարդից 2000 հատ վարունգե ստացվում. 100-ը 2 ոռուլի. ուրեմն մարդից 4 ոռուլի։

Բողէր ցանում են մարդի կողքերին՝ մի մարդից 50 կոպեկ միշտ տալիս ե։

Հարցեր. Կազմեցեք աղյուսակ ձեր սերմած բանջարների. վորքան եք հավաքում, վորքան ծախսում վորքան թողնում ձեր տնտեսության համար։

## Կարտոֆիլ

Մեզանից 100 տարի առաջ գյուղացիք կարտոֆիլին սատանի խնձոր անունն ելին տալիս և նրա ուտելը մեղք համարում։

Այժմ տեղեր կան, վոր գյուղացու հողի մեծ մասը կարտոֆիլն ե բոնում։

Կարտոֆիլ տնկելը շատ ոգտավետ ե։ Մի գեսատին կարտոֆիլը 3-4 անգամ ավելի ոգուտ ե տալիս դան հացահատիկը։ Կարտոֆիլին պետք ե ուժեղ, թեթև և մաքուր հող։

Կարտոֆիլի հողը լավ մշակում են և տնկելուց հետո շարունակ քաղհանում, փխրացնում են։

Հաջորդ տարում կարտոֆիլի հողը շատ հարմար ե հացահատիկ ցանելու, վորովհետև անպետք խոտերը քաղհանվել են։ Կարտոֆիլի հողը պարարտացնում են մոխիրով։ Կարտոֆիլից պատրաստում են ալյուր, շաքարաջուր, ոսլա։

## Բամբակ

Հայաստանը բամբակ ցանելու լավ շրջաններ ունի։ Յերևանի գավառում - Ղամարլու, Հրազդան, իսկ Եջմիածնում՝ Ղուրդուղուլի, Զանգիբասարի և Սարդարաբաթի շրջանները։

Պատերազմների շնորհիվ բամբակի արդյունաբերությունը ընկավ։ Այժմ, յերբ բանվորն ու գյուղացին կպել են շինարար աշխատանքի, պետք ե բամբակ մեծ չափով ցանել։

Ունենալով մեծաքանակ բամբակ՝ մենք հացի կարիք չենք զգա։

Խորհրդային Ռուսաստանը հաց շատ ունի, բայց բամբակ չունի։ Յերբ մենք բամբակ ունենանք, ամեն ինչ կունենանք՝ հաց, հագնելիք, մեքենաներ, մանգաղ, գերանդի և այլն։

Այդ ամենն ել իրենց վոտքով կգան բամբակի մոտ։

Բամբակը թանգացել է թե Խորհրդային Ռուսաստանում և թե ամբողջ աշխարհում, իսկ հացը եժանացել է, ուրեմն այժմ ձեռնուր յե բամբակ ցանել և վոչ թե ցորեն:

Ի՞նչ կարելի յեր ձեռք բերել պատերազմից առաջ մի փութ բամբակով

Յորեն 12 փութ

Կամ չիթ 70 արշին

» նավթ 10 փութ

» աղ 30 փութ,

Ահա թե ինչու Հայաստանի բամբակագործության կոմիտեն աշխատում ե բամբակի ցանքսերը ավելացնել:

## Լենինի գործը

Վողջ աշխարհի բանվորներն ու աշխատավոր գյուղացիները մի առաջնորդ ունեն. դա լենինն է, 30 տարի յե անցել, վոր նա բանվոր դասակարգի և չըավոր գյուղացիության զինվոր գրվեց.

Սյն որից բանվորն ու չըավոր գյուղացին իրենց կոիվը տանում են լենինի առաջնորդությամբ. գլուխն ու սիրտը լենինն է, նա յե կովի պլան գծողը: Յերբ բանվոր դասակարգը հաղթվում եր, լենինն եր, վոր խորհուրդ եր տալիս չհուսահատվել, այլ մի փոքր նահանջել՝ կոիվը նոր ուժերով վերսկսելու համար:

Սյոր բանվորներն ու գյուղացիները կովում են իշխանությունն իրենց ձեռքում պահելու համար. Բայց ինչպէս. Դրա պատասխանն ել լենինը տվեց: — Խորհրդային իշխանությունը պահելու համար բանվորն ու գյուղացին միասին պիտի գործեն: Նրանք ձեռք-ձեռքի տված պիտի աշխատեն մեր յերկիրը շենացնել: Միայն այս պայմանով խորհրդային իշխանությունը կարող ե հաստատ մնալ:

Ահա թե ինչու այդքան թանգ ե մեղ բոլորիս համար ընկ. լենինը.

## Ստեփան Շահումյան

Ստեփան Շահումյանը Բագու վոտ գնելով սիրելի դարձավ բոլոր բանվորներին. Նրա դռները միշտ բաց եյին կուսակցական և անկուսակցական բանվորների առաջ: Նա սիրված եր վոչ միայն իր համախոհ ընկերներից, այլ և իր հակառակորդներից. Մի գեղը նրա կյանքից.

Յերբ մի խմբակ՝ ճանաչելով Շահումյանին՝ վորոշել եր սպանել նրան, խմբակի անդամներից մեկը ծանոթանում է Ստեփան Շահումյանի հետ ու գնում նրա հայերեն լեզվով դասախոսության: Դասախոսությունը լսելուց հետո նույն այդ մարդը յերդվեց իր կյանքը չխնայել Ստեփանի համար և մտավ կոմունիստական կուսակցության մեջ:

1918 թվին Շահումյանը կովկասի Արտակարգ Կոմիսարի պաշտոնով ապրում եր 2 փոքրիկ սենյակներում: Յերբ նրան հարց տվին. «Ինչպէս ես ապրում քաղաքի ծայրում, ուր ամեն մի ըոպե կարող են վնասել քեզ»: Նա հանգիստ պատասխանեց. — «Եյդ բանով յես չեմ հետաքրքրվում»:

Շահումյանը կովկասի բանվորության ղեկավարն եր, և այդպես ել հեղափոխությունն անվանեց նրան:

## Ընկ. Տրոցկու նաևսկի կարմիր զինվորին

Մայիսի 1-ի առթիվ գրում եմ քեզ, և դու կարդում ես իմ նամակը. Գրագիտությունը կապում ե մեզ իրար հետ: Սյդ ե նրա մեծ ուժը:

Սյն բոլորն, ինչ մարդկային հազարավոր սերունդներ մինչև այժմ կատարել, սովորել, տեսել և զգացել են, գրված են գրքերում: Յեվ վորովինետև դու գրագետ ես, այդ բոլորը քեզ մատչելի յե:

Քեզ կարդալ-գրել սովորեցրեց Կարմիր Բանակը: Յեղբայրաբար շնորհագործում եմ քո այդ մեծ հաջողությունը: Այժմ դու ձեռքումդ ունես գիտության գոները բացող բանալին: Բայց տես՝ կես ճանապարհին կանգ չառնես: Ով կիսագրագետ ե, նա շուտ ե մոռա-

նում և անգրագետ դառնում։ Պետք ե սովորել առանց  
դժվարության, սահուն և աղատ կարդալ։ Յուրաքան-  
չյուր աղատ ըովեյին պիտի կարդալ, գրել և վերջնա-  
կանապես գրագետ դառնալ։

Ինչըան գեղեցիկ վոտանավորներ, յերգեր, պատ-  
մըվածքներ, պատմական և գիտական գրքեր կան գրր-  
ված. — մարդկային մտքի մի ամբողջ ովկյանու. Յեվ  
դեռ ինչըան նոր գրքեր պիտի գրվեն. Զե՞ վոր մարդկու-  
թյունը յերբեք կանգ չի առնում, այլ միշտ առաջ ե  
գնում։

Հենց վոր մենք մեր յերկրի վերքերը բուժենք,  
բարձրացնենք մեր տնտեսությունը, լավացնենք և գե-  
ղեցկացնենք մեր կյանքը, մեր ամբողջ ազգաբնակու-  
թյունը կազատվի տգիտության խավարից և կը շարժվի  
դեպի առաջ։

Նայիր, ընկեր, յետ չմնաս. Սովորիր, ժամանակ մի  
վատնիր. Հավասարվիր առաջավորներին. Լ. Տրոցկի

## Ինտերնացիոնալ

Յելեք, մերժված վորդիք կյանքի,  
զոհեր սովի ու տանջանքի,  
զասում արդար պայթել ե արդ,  
հառաջ դեպի վերջին գոռ մարտ:  
Յելիր, ստրուկ ամբոխ անհաղթ,  
փշիր անցյալն հիմքից առմիշտ,  
ու նոր մի կյանք կանգնիր անխախտ,  
մի նոր փառքով, ուրախ, անվիշտ։

Սա վերջին վճռական մեր կոիվն ե արդար,

Ինտերնացիոնալը փրկե պիտ վողջ աշխարհ։


Չկա ուրիշ փրկիչ վերին՝  
աստված, արքա կամ դատ արդար.  
հենված միայն բու ուժերին՝  
փրկիր թե քեզ, թե վողջ աշխարհ։  
Ճընշիր բոնի ու ուժն համառ,  
գիշատողին անսիրտ, անհագ։

շուտ բորբոքիր կըրակը վառ,

կըսիր, քանի յերկաթն ե տաք։

Սա վերջին վճռական մեր կոիվն ե արդար,

Ինտերնացիոնալը փրկե պիտ վողջ աշխարհ։



# ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Քաղաքական գրականության սերիա

4. Կ. Մարբս—Վարձու աշխատանք ու կապիտալ, թարգմ. Ստ. Շահումյանի (72 էջ)՝ լույս է տեսել 1921 թ., Յերևան. . . . . Գինը — լ. 15 կ.
2. Կ. Տոպովսկի—Հարկավոր և արդյօք բանվորներին ու պատրաստություններին համար, թարգմ. Նարգիտյանի (24 էջ), 1922 թ., Յերևան . . . . . — լ. 10 կ.
5. Ա. Մյանիկյան — Մեր քաղաքականությունն ու հերթական ինդիբները (15 էջ), 1922 թ., Յերևան . . . . . — լ. 5 կ.
4. Ա. Լենին—Պարենհարկի մասին, թարգմ. թ. Ա. (64 էջ)՝ 1922 թ., Յերևան . . . . . — լ. 15 կ.
5. Միխ. Գորեվ—Բերքի սակագությունն և սովորակառները, թարգմ. կ. Հ., 1922, Յերևան . . . . . — լ. 5 կ.
6. Կ. Մարբս յեվ Ֆ. Նեղելս—Կոմմունիստական Մանկական ազգային միջուկ և նրա տեղը պատմության մեջ, թարգմ. Պ. Մակինցյանի (79 էջ)՝ 1922 թ., Յերևան . . . . . — լ. 40 կ.
7. Կ. Ռազեկ—Հոկտեմբերյան հեղափոխությունը և նրա տեղը պատմության մեջ, թարգմ. կ. Հ. (22 էջ), 1922 թ., Յերևան . . . . . — լ. 5 կ.
8. Վ. Բիտորյանալի—Պայքար աշխարհի բարիքների համար, թարգմ. կ. Հ. (12 էջ)՝ 1922 թ., Յերևան . . . . . — լ. 5 կ.
9. Ա. Մուֆյան—Սոցիալիստականականները Անդրկովկասով (29 էջ), 1922 թ., Յերևան . . . . . — լ. 15 կ.
10. Ա. Ցիկունկո—Գրադարանագիտության այլընարան, թարգմ. Ց. Թաղիմոսյանի (42 էջ)՝ 1922 թ., Յերևան . . . . . — լ. 20 կ.
- ✓ 11. Քաղլուաբրների առաջին համազումաբը (72 էջ), 1923 թ., Յերևան . . . . . — լ. — կ.
12. Կ. Ռազեկ—Վ. Ի. Լենին, թարգմ. Ս. Զ. (16 էջ)՝ 1923 թ., Յերևան . . . . . — լ. 10 կ.
15. Կովալենկո—Քաղաքական գրագիտության ձևունալիք, թարգմ. Լ. Արովյանի (Հ. Պիտուատի խմբ. մարմի հավելութերով) . . . . . — լ. 40 կ.
14. Ռուս. Կոմ. Յերիտ. Միության Պատմությունը . . . . . — 30 կ.
- ✓ 15. Գրագետ—Ալբրեհնարան մեծահասակների համար, կազմեցին Բ. Լ. Վ. Ռ. մի խումբ աշխատակիցներ . . . . . — 20 կ.
16. Ա. Շատանը բ.—Ընթերցարան բանվորների և զյուղացիների համար . . . . . — 80 կ.

Գինը 20 կ.

Լույս տեսած գրեթե ծախլում են Պետրաշի գրախանություն

Դիրքություն տպագրված և Թետրատի առաջին տպարանում (Վաղարշապատ)